

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վոնփուկիոս :

Ըն եղական մարդիկն որ աշխարհիս երեսը ատեն ատեն երևցեր ու ամբողջ ազգի մը կամ ժողովրդեան մեծամեծ օգուտներ ըրեր են բարոյապէս, արժանի են ոչ միայն այն ազգին կամ ժողովրդեան երախտագիտութեանը, այլ և աշխարհիս ամէն ազգաց տեղեկութեանը և գովեստին : Եւսպիսի կարգէ դուրս մարդկանց մէկն ալ է Չինացւոց մեծանուն փիլիսոփան Վոնփուկիոս, որ իրենց լեզուովը կ'ըսուի Քոնֆուցիոս :

Հաւանական կարծեօք աս մարդը Քրիստոսէ 500 տարիի չափ առաջ ծաղկեր է Չինու մէջ, որով գրեթէ մեր Տիզրան Արուանդեան Թագաւորին ատենները կ'իյնայ : Չինացւոց ազնուական ցեղերէն իջած ուսումնասէր ու ծանրաբարոյ տղայ մը եղեր է պրշտիկուց, և իրմէ առաջ գրուած գրքերը կարդալով շատ խելք սորվեր է : Մէկ որդի մը միայն ունեցեր է, բայց իր ցեղը ոչ երբէք դադրեր է Չինու մէջ, և ինչուան հիմա շատ մեծ պատիւ ունի . ասկէ յիսուն տարի մը առաջ տասնըմէկ հազար հոգի են եղեր իր յաջորդները, ան ալ մանչերը միայն :

Վոնփուկիոս իրեք հազարի չափ աշակերտ ունեցաւ կ'ըսեն . ասոնց մէջ հինգ հարիւրը տէրութեան մեծամեծ պաշտօններուն հասան, եօթանասուն հոգի ալ այնչափ երևելի եղան վարքով ու գիտութեամբ որ Չինացւոց մէջ անուննին ու հայրենիքնին ալ տեղնիտեղը գրուած է : Չորս դաս բաժնած էր իր աշակերտները . առաջին դասուն ուսումն էր առաքինութիւն, երկրորդինը ուղիղ մտածութիւն ու աղէկ խօսուածք . երրորդինը քաղաքականութիւն, և չոր

րորդինը՝ բարոյական նիւթերու վրայ մաքուր լեզուով և յստակ ոճով գրքեր շարադրել :

Կ'ըսեն թէ Վոնփուկիոս ինչ որ ուրիշներուն կ'ապրտարէր՝ առաջ ինքը կը կատարէր . և իրեն գլխաւոր խրատն էր՝ Եստուծոյ հնազանդիլ ու ծառայել, ծնողաց ու Թագաւորաց կուրօրէն հըպատակիլ, անձին յաղթել, և ուղիղ խղճմտանքի դէմ բան չխորհիլ չխօսիլ ու չգործել : Եթանասունուիրեք տարեկան մեռաւ, ու մահուանը մօտ կուլար կ'ողբար իր ատենի անկարգութեց և մարդկանց աւրուելուն վրայ, այնչափ որ կ'ըսեն թէ իր հիւանդութեան ու մահուանն ալ պատճառը աս մտածութիւնս եղեր է : Եւսպիսիները այնչափ ցաւեցան իր մահուանը վրայ որ ոմանք ինչուան վեց տարի գերեզմանին քովէն չհեռացան, և հիմայ ալ իր գերեզմանը մեծ ուխտատեղի է Չինաց ժողովրդեանը՝ մեծերուն ու Թագաւորներուն :

Եւ յիրաւի շատ զարմանալի կատարելութիւններ կը պատմեն Վոնփուկիոսի վրայ . ծանրակաց ու զուարթ էր կ'ըսեն, հաւատարիմ, արդար ու քաղցրաբարոյ, որով ամենուն սիրտը իրեն կը քաշէր ու ամենուն պատկառելի էր : Քիչ կը խօսէր, շատ կը մտածէր . հարստութիւնն ու պատիւը կ'արհամարհէր . աւելի խիստ էր իր անձին դէմքան թէ ուրիշներուն . և որ ամէն բանէն աւելի զարմանալի է հեթանոս փիլիսոփայի մը վրայ՝ Վոնփուկիոս շատ խոնարհամտութիւն ալ կը ցուցնէր, ու իր պակասութիւնները անպատուակ կը զրուցէր ուրիշներուն :

Վոնփուկիոս գրքեր ալ շարադրեր է, բայց քննիչները շատ կը տարակուսին ան գրքերուն իրաւցնէ իրեն շարադրածն ըլլալուն . ոմանք ինչուան իր վարքին ու պատմութեանը վրայ ալ տարակոյսներ կը հանեն . և սակայն շատ զօրաւոր ապացոյց է աս անձին մեծ ու զարմանալի մարդ եղած ըլլալուն աս բանս՝ որ երկու հազար տարուրնէ՛ ի վեր այնչափ պատիւ ունի ոչ միայն Չի-



նու երկիրը , այլ նաև Վրորէա , Վո-
լինչին և ուրիշ տեղուանք :

Եւ փիլիսոփային խելացի առածնե-
րէն մէկ քանին ասոնք են .

“ Եւ այլ որ խոստմունքդ արդար ըլ-
լայ . վասն զի խոստանալէն ետքը՝ կա-
տարելու է :

” Նարստու թիւնն ու փառքը բարիք
են , անոնց փափաքին ալ բնական բան
է . բայց երբոր աս բարիքը առաքինու-
թեան հետ չեն միաբանիր , խելացի
մարդը զանոնք պիտի արհամարհէ ու
մէկզի ձգէ վեհանաճնութեամբ : Եւ քա-
տու թիւնն ու տգիտութիւնը չարիք են ,
անոնցմէ փախչիլն ալ բնական է . երբ-
որ խելացի մարդը ասոնց մէջ իյնայ ,
կրնայ աշխատիլ որ ազատի ասոնցմէ ,
բայց առանց յանցանք մը գործելու :

” Երբոր մէկը քեզմէ լաւ մարդ չէ ,
հետը բարեկամութեամբ մի կապուիր :

” Եւ մեռնիլ կ'ուզես նէ , առաջ
աղէկ ապրիլ սորվէ :

” Բարեաց փոխարէն բարիք ըրէ .
բայց չարեաց փոխարէն չարիք ոչ եր-
բէք :

” Երբոր հայրենեացդ մէջ առաքի-
նութիւնը հալածուած ու մոլութիւնը
տիրած է , ձգէ ելիր հայրենիքէդ . բայց
թէ որ գնացած տեղդ քու հայրենեացդ
պակասութիւնները պիտի տանիս , թը-
շուառ երկրիդ մէջ մնա . դուրս երթաւ
լէդ ինչ օգուտ :

” Կանրութիւնը իմաստութե՛ կե-
ղևն է , բայց անով կը պահուի իմաս-
տութիւնը ” :



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Սարաշու վանքին Դաբասաբանագիրքը :

ՀԱՅԱՍՏԱՆ լրագրոյն 63 թիւը , որ
ազգային լրոց մէջ Սարաշ քաղքին
վանքը եղած Մխիթար Վօչի դատաս-
տանագրոց վրայ տեղեկութիւն մը և
խնդիր մը կուտայ , ձեռուընիս հասաւ
այն ժամը՝ երբ մենք ալ նոյն դատաս-

տանագրոց հեղինակին և իր իսկագիր
առջի օրինակին վրայ կը խօսէինք մեր
ձեմարանին մէջ . կարդացինք Հայաս-
տանին տուած տեղեկութիւնն ալ , շը-
նորհակալ եղանք անոնց որ կերպով մը
մեզի իմացուցին մեր սուրբ և անմահ
Լամբրոնացոյն մէկ աշխատանքն ալ ,
և կը փութանք այն տեղեկութիւնը
հրատարակողին քանի մը տարակոյսնե-
րը լուծելու , և իմացընելու թէ ինչէն
Լամբրոնացոյն և Վօչին գործքերը
իրարու հետ շփոթեր են :

Եւրդ նախ աս կ'ըսենք որ Լամբրո-
նացոյն և Մխիթարայ աշխատութիւն-
ները զատ զատ գործքեր են . առջինի-
նը թարգմանութիւն է , երկրորդինը
հեղինակաբար գրուած է . Լամբրոնա-
ցոյնը՝ () Եկնարո-Լի-նի կամ () Երնայ
Գիրք է , ինչպէս որ ինքն ալ միշտ կ'ա-
նուանէ իր թարգմանութիւնը այն
հրատարակուած յառաջաբանութեան
մէջ . “ Օայս ծայրաքաղ օրնարո-
” Լի-նի ” տառապեալ եպիսկոպոսս
” Տարսոնի թարգմանեցի . . . Վոյր
” առ ինքն այս համառօտ քաղաքական
” օրնարո-Լի-նի . . . Եւրարի թարգ-
” մանութիւն օրնայդ ” և այլն . իսկ
Մխիթար Վօչին շինածը թէպէտ և
նոյն կամ նման է նիւթը , բայց միշտ
Դաբասաբանայ գիրք կամ Դաբասաբանա-
գիրք կ'ըսուի . ինչպէս նոյն օրագրին
մէջ բերուած վերջի հատուածը կ'իմա-
ցընէ , որ է բուն Մխիթարայ Վօչին
խօսքը որ կ'ըսէ . “ Եւ նախագրութիւն
” Գրոցս դաբասաբանի . . . Հիւսել զիրս
” դաբասաբանի . . . Փոխել զիրս դաբաս-
” անի ” :

Եւ երկու գրուածքը , և այն հրա-
տարակեալ երկու յառաջաբանութիւն
ները տարբեր հեղինակէ և ժամանակէ
գրուած ըլլալն ալ յայտնի է նոյն տեղը ,
որովհետև Լամբրոնացին յայտնի կ'ի-
մացընէ որ օրինագրութեանց համար
խնդիրը եղաւ ՈՒԲ թուին (1193) և
ինքը թարգմանեց ՈՒԵԼԻՆ (1196 կամ
ասոր մօտ տարի մը) . իսկ ետքի յառա-
ջաբանը , որ է Մխիթարայ , կ'ըսէ թէ
ՈՒԳ թուին (1184) ձեռք զարկինք աս